

Luys Lnyu®



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

# ՀՀ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԻՆԴԵՔՍ - 2026

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից  
հրապարակված «Էներգիայի վերափոխման ինդեքս - 2026» զեկույցի հիման վրա



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ .....	1
1. ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....	3
2. ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ .....	7
2.1. Էներգիայի վերափոխման գործընթացի համաշխարհային միտումներն ու արդյունքները .....	7
2.2. Էներգիայի վերափոխման գործընթացն աշխարհի տարբեր տարածաշրջաններում .....	9
3. ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ .....	12
4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ .....	17
ԱՄՓՈՓՈՒՄ .....	20

## ՆԱԽԱԲԱՆ

Համաշխարհային էներգետիկ համակարգերը վերջին տարիներին գործում են խորքային վերափոխումների պայմաններում: Կլիմայի փոփոխության բացասական հետևանքների խորացումը, աշխարհաքաղաքական լարվածության աճը, մատակարարման գլոբալ շղթաների խոցելիությունը, թվային տեխնոլոգիաների արագ զարգացումը և էներգիայի պահանջարկի շարունակական աճը պահանջում են վերանայել էներգետիկ քաղաքականության՝ նախկինում սահմանված առաջնահերթությունները: Մասնավորապես, եթե նախկինում էներգետիկ անցումը հիմնականում դիտարկվում էր որպես ածխածնային արտանետումների կրճատման և կլիմայական նպատակներին հասնելու գործիք, ապա այսօր այն ավելի ու ավելի մեծ չափով է ընկալվում որպես տնտեսական մրցունակության, ազգային անվտանգության և համակարգային դիմակայունության ապահովման կարևորագույն նախապայման:

2025թ. գրանցվել է համաշխարհային էներգետիկ պահանջարկի աճի՝ վերջին տասնամյակի ամենաբարձր տեմպերից մեկը՝ պայմանավորված էլեկտրաֆիկացման ծավալների կտրուկ ավելացմամբ, տվյալների մշակման կենտրոնների արագ ընդլայնմամբ և արհեստական բանականության տեխնոլոգիաների լայն կիրառմամբ: Միաժամանակ, մատակարարման շղթաների խափանումները, աշխարհաքաղաքական հակամարտությունները և առևտրային սահմանափակումների ընդլայնումն ավելի են ընդգծել էներգետիկ համակարգերի ճկունության և հուսալիության բարձրացման անհրաժեշտությունը: Այս առումով, երկրների առջև ծառայած հիմնական խնդիրը ոչ միայն ցածր ածխածնային տնտեսությանն անցումն է, այլև էներգետիկ համակարգերի այնպիսի վերափոխումը, որը կապահովի անվտանգություն, մատչելիություն, կայունություն և երկարաժամկետ մրցունակություն:

Էներգիայի արդյունավետ վերափոխումը ենթադրում է հանաժո էներգակիրների վրա հիմնված ավանդական մոդելներից աստիճանական անցում դեպի ավելի մաքուր, արդյունավետ և տեխնոլոգիապես զարգացած համակարգեր: Այդ գործընթացը ներառում է ոչ միայն էներգիայի արտադրության և սպառման կառուցվածքային փոփոխություններ, այլև համապարփակ բարեփոխումներ կարգավորման դաշտում, ենթակառուցվածքներում և ֆինանսավորման մեխանիզմներում:

Երկրներն էներգետիկ անցման տեմպերով միմյանցից էապես տարբերվում են: Մասնավորապես, զարգացող երկրները, բացի բոլոր երկրներին հատուկ, համընդհանուր խնդիրներից, առավել հաճախ բախվում են նաև լրացուցիչ մարտահրավերների՝ կապված ֆինանսական ռեսուրսների սահմանափակության,

տեխնոլոգիական պատրաստվածության ցածր մակարդակի, էներգետիկ հասանելիության խնդիրների և ներդրումային ռիսկերի հետ: Բացի այդ, արդյունավետ էներգետիկ անցումը պահանջում է ոչ միայն արագ գործողություններ, այլև սոցիալական արդարության, տնտեսական կայունության և ներառական զարգացման սկզբունքների պահպանում:

Էներգետիկ համակարգերի վերափոխման գործընթացը բնույթով գլոբալ է և չի սահմանափակվում առանձին երկրների կամ տարածաշրջանների խնդիրներով: Մասնավորապես, առանձնահատուկ կարևորություն են ստանում գործընթացի գնահատման, երկրների առաջընթացի համեմատական վերլուծության և լավագույն փորձի բացահայտման խնդիրները: Պատահական չէ, որ միջազգային հեղինակավոր կազմակերպություններից շատերը մշակել են էներգետիկ անցման գնահատման տարբեր մոտեցումներ: Այս առումով, առավել հայտնի և հեղինակավորներից են Համաշխարհային տնտեսական համաժողովի (ՀՏՀ) կողմից հրապարակվող՝ էներգիայի վերափոխման վերաբերյալ ամենամյա զեկույցները: ՀՏՀ-ն նշված զեկույցների շարքը հրապարակում է 2012 թվականից: Դրանցում գլոբալ և ազգային մակարդակներում ներկայացվում են էներգետիկ անցման հիմնական միտումները, արձանագրված առաջընթացը և առկա խոչընդոտները: Ձեկույցների հիմքում էներգիայի վերափոխման ինդեքսն է (ԷՎԻ), որը գնահատում է երկրների էներգետիկ համակարգերի ընթացիկ արդյունավետությունը և հետագա վերափոխման պատրաստվածությունը: ԷՎԻ-ի միասնական մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս ոչ միայն ամփոփ ներկայացնելու տարբեր երկրներում էներգետիկ անցման ընթացքը, այլև իրականացնելու միջերկրային և միջժամանակային համեմատություններ, բացահայտելու ինչպես ընդհանուր միտումները, այնպես էլ առանձին երկրների ուժեղ և թույլ կողմերը:

«Լույս» հիմնադրամը յուրաքանչյուր տարեկան զեկույցի հրապարակումից հետո պատրաստում է դրա վերաբերյալ հաշվետվություն<sup>1</sup>: Հիմնադրամի կողմից հրապարակվող հաշվետվությունները նպատակ ունեն ներկայացնելու տվյալ տարեկան զեկույցում տեղ գտած առավել ուշագրավ գլոբալ փաստերը և ՀՀ վերաբերյալ գնահատականները, ինչպես նաև կատարելու տարբեր տարածաշրջանային համադրումներ: Հաշվետվությունները սկսվում են ԷՎԻ-ի և դրա հաշվարկման մեթոդաբանության հակիրճ նկարագրությամբ: Այնուհետև ներկայացվում են տվյալ տարվա զեկույցում տեղ գտած՝ համաշխարհային կտրվածքով առավել ուշագրավ գնահատականներն ու փաստերը: Հաշվետվության հաջորդ մասում վերլուծվում է էներգիայի վերափոխման ոլորտի՝ Հայաստանին

<sup>1</sup> ԷՎԻ-ի վերաբերյալ «Լույս» հիմնադրամի նախորդ վերլուծություններին կարելի է ծանոթանալ այստեղ՝ <https://www.luys.am/...>:

վերաբերող տեղեկատվությունը: Բացի այդ, ներկայացվում են Հայաստանի և այլ երկրների տարածաշրջանային համադրումներ: Յուրաքանչյուր հաշվետվություն ավարտվում է կարևոր արդյունքների ու եզրահանգումների ամփոփմամբ:

Օրերս ՀՏՀ-ն հրապարակել է «Էներգիայի վերափոխման ինդեքս - 2026» զեկույցը<sup>2</sup> (այսուհետ՝ Զեկույց), որում 120 երկրների (այդ թվում՝ Հայաստանի) համար հաշվարկված է ԷՎԻ-ն, դրա հիման վրա կազմված է համաշխարհային վարկանիշային աղյուսակ, վերլուծված են վերջին մեկ տարվա ընթացքում արձանագրված էական տեղաշարժերը, ինչպես նաև վերհանված են տարբեր երկրների ու տարածաշրջանների առջև ծառայած առաջնային մարտահրավերները:

Սույն հաշվետվությունը պատրաստված է «Էներգիայի վերափոխման ինդեքս - 2026» զեկույցի հիման վրա:

## 1. ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Էներգիայի վերափոխման ինդեքս» ագրեգացված ցուցանիշով քանակապես գնահատվում է, թե տվյալ երկրի էներգետիկ համակարգը որքանով է արդյունավետ և որքանով է պատրաստ ապահովելու հետագա վերափոխման գործընթացի հաջող իրականացումը: Այն նաև կարևոր է երկրների էներգետիկ համակարգերի ընթացիկ վիճակի, էներգիայի վերափոխման գործընթացում արձանագրված առաջընթացի և առկա մարտահրավերների վերաբերյալ համակողմանի պատկերացում կազմելու առումով:

ԷՎԻ-ն հաշվարկվում է 0-100 սանդղակով, որտեղ 100-ը համապատասխանում է էներգիայի վերափոխման գործընթացում երկրի արդյունավետության առավելագույն հնարավոր մակարդակին:

ԷՎԻ-ն հաշվարկվում է որպես երկու ենթաինդեքսների կշռված միջին: Դրանցից առաջինի՝ «Համակարգի արդյունավետության» կշիռը 60% է: Ենթաինդեքսով գնահատվում է երկրում գործող էներգետիկ համակարգի ընթացիկ կատարողականը երեք հիմնական ուղղություններով՝ *անվտանգություն*, *արդարացիություն* և *կայունություն*: Այդ ուղղություններն ընդգրկում են ինը ենթախմբերում ներառված 22 ցուցիչներ (նախորդ տարվա համեմատ երկու ցուցիչ դուրս է եկել, և մեկն ավելացել է): Ենթաինդեքսը հաշվարկվում է որպես նշված երեք ուղղությունների գնահատականների միջին թվաբանական:


<sup>2</sup> Զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://reports.weforum.org/docs/WEF\\_Energy\\_Transition\\_Index\\_2026.pdf](https://reports.weforum.org/docs/WEF_Energy_Transition_Index_2026.pdf):

Երկրորդ՝ **«Վերափոխման պատրաստականություն»** ենթաինդեքսը, որին տրվում է 40% կշիռ, գնահատում է երկրի կարողությունը՝ ապահովելու էներգիայի վերափոխման գործընթացի համար անհրաժեշտ նպաստավոր միջավայր: Ենթաինդեքսի հաշվարկման համար օգտագործվում է երկու ուղղությունների՝ *«կարգավորող դաշտի և ներդրումներ»* և *«հնարավորություն ընձեռող գործոններ»*, հինգ խմբերում ընդգրկված 22 ցուցիչ (նախորդ տարվա համեմատ ավելացել է երկու նոր ցուցիչ): Ենթաինդեքսը հաշվարկվում է որպես վերոհիշյալ երկու ուղղությունների մեծությունների միջին թվաբանական:

Ընդհանուր առմամբ, 2026-ի ԷՎԻ-ն հիմնված է 44 ցուցանիշի վրա: Նախորդ տարվա համեմատ մեթոդաբանությունում կատարվել են որոշ փոփոխություններ՝ նպատակ ունենալով առավել ամբողջական արտացոլել էներգետիկ համակարգերի դիմակայունության, թվային ենթակառուցվածքների և մատակարարման շղթաների անվտանգության հետ կապված նոր մարտահրավերները: Մասնավորապես, **«Համակարգի արդյունավետություն»** ենթաինդեքսի *«Անվտանգություն» ուղղության «Հուսալիություն»* ենթախմբից հանվել են էլեկտրամատակարարման ընդհատումների միջին տևողությունն ու հաճախականությունը բնութագրող SAIDI և SAIFI ցուցիչները: Փոխարենն ավելացվել է «էլեկտրամատակարարման հուսալիություն» ցուցիչը: Բացի այդ, **«Վերափոխման պատրաստականություն»** ենթաինդեքսի *«Հնարավորություն ընձեռող գործոններ»* ուղղության *«Ենթակառուցվածքներ»* ենթախմբում ավելացվել է երկու նոր ցուցիչ՝ «արհեստական բանականության պատրաստվածության ինդեքս» և «մաքուր տեխնոլոգիաների համար անհրաժեշտ հանքանյութերի ներմուծումից կախվածություն»: Այս փոփոխություններն արտացոլում են էներգետիկ անցման գործընթացում թվային տեխնոլոգիաների, տվյալների մշակման ենթակառուցվածքների և կրիտիկական հանքանյութերի մատակարարման շղթաների աճող կարևորությունը:

Գծապատկեր 1-ը պատկերում է ԷՎԻ-ի հաշվարկման մեթոդաբանությունը:

## Գծապատկեր 1. ԷՎԻ-ի հաշվարկման մեթոդաբանությունը



«Համակարգի արդյունավետություն» ենթահինդեքսի հիմքում «էներգետիկ եռանկյան» հայեցակարգն է, համաձայն որի՝ հաջող էներգետիկ անցման համար անհրաժեշտ է հավասարակշռություն պահպանել հետևյալ երեք սկզբունքների (եռանկյան գազաթների) միջև.

- *Անվտանգություն*, որը ենթադրում է էներգամատակարարման կայունության և դիմակայունության ապահովում՝ էներգիայի աղբյուրների, տեխնոլոգիաների և առևտրային գործընկերների դիվերսիֆիկացման, ցանցային ենթակառուցվածքների հուսալիության, ինչպես նաև արտաքին ցնցումներին հարմարվելու կարողության հաշվին:
- *Արդարացիություն*, որը գնահատում է բնակչության և տնտեսավարող սուբյեկտների համար էներգիայի ժամանակակից և մաքուր ձևերի հասանելիությունն ու մատչելիությունը, տնտեսական գործունեության շարունակականության երաշխավորման տեսանկյունից էներգակիրների գների մատչելիությունը և խոցելի խմբերի սպառողների ու փոքր բիզնեսի պաշտպանությունը երաշխավորող գնագոյացման մեխանիզմների առկայությունը:
- *Կայունություն*, որը բնութագրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման առումով էներգետիկ համակարգերի բարելավման մակարդակը՝ արտանետումների կրճատման, ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման, մաքուր էներգետիկային աջակցության և էներգաարդյունավետության բարձրացման հաշվին:


2026-ի Ձեկույցում ընդգծվում է, որ էներգետիկ անվտանգության ավանդական ընկալումը զգալիորեն փոխվել է: Էներգետիկ համակարգերի անվտանգությունը ներկայումս ներառում է ոչ միայն մատակարարման հուսալիությունն ու էներգակիրների մատչելիությունը, այլև էլեկտրացանցերի դիմակայունությունը, թվային ենթակառուցվածքների պաշտպանվածությունը, կրիտիկական հանքանյութերի հասանելիությունը և մատակարարման շղթաների կայունությունը:

ԷՎԻ-ի երկրորդ ենթահինդեքսով կարևորվում է այն հանգամանքը, որ էներգիայի վերափոխման առումով երկրի առաջընթացը կախված է նաև համակարգի պատրաստականությունից՝ վերափոխման համար նպաստավոր միջավայր ստեղծելու կարողությունից: **«Վերափոխման պատրաստականություն»** ենթահինդեքսում դիտարկվում են երկու ուղղություններում խմբավորված հետևյալ հինգ ենթախմբերը.

- «կարգավորումներ և քաղաքական հանձնառություն»,
- «Ֆինանսներ և ներդրումներ»,
- «ենթակառուցվածքներ»,
- «նորարարություն»,
- «կրթություն և մարդկային կապիտալ»:

Նախորդ տարվա զեկույցի համեմատ էներգիայի վերափոխման գործընթացը ներկայացնող գծապատկերը չի փոխվել (Գծապատկեր 2):

### Գծապատկեր 2. Էներգիայի վերափոխման գործընթացը



Ջեկոյցի «ԷՎԻ-ի մեթոդաբանությունը» բաժնում հատուկ նշված է, որ ԷՎԻ-ն դինամիկ ցուցանիշ է, որը պարբերաբար վերանայվում է, քանի որ ժամանակ առ ժամանակ փոփոխվում են էներգետիկ վերափոխման առաջնահերթությունները, իսկ սկզբնաղբյուրների տվյալները վերանայվում են: Այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում, որ երկրների՝ տարբեր տարիների զեկոյցներում ներկայացված միավորների և դիրքերի համեմատությունները կատարվեն հատուկ զգուշությամբ:

## 2. ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Համաշխարհային տնտեսական համաժողովի «Էներգիայի վերափոխման ինդեքս - 2026» զեկոյցը 2026-ին ևս (ինչպես և նախորդ տարիներին) կազմվել է ոլորտի մասնագիտական ծառայությունների մատուցման առաջատար «Աքսենչր» (Accenture) ընկերության<sup>3</sup> հետ համագործակցությամբ: Ջեկոյցում գնահատվել է էներգիայի վերափոխման գործընթացն աշխարհի 120 երկրներում, վերհանվել են զարգացման հիմնական միտումները և ծառայած մարտահրավերները, ներկայացվել են տարբեր երկրներում արձանագրված հաջողված փորձի օրինակներ:

### 2.1. Էներգիայի վերափոխման գործընթացի համաշխարհային միտումներն ու արդյունքները

Ջեկոյցի համաձայն՝ 2026թ. համաշխարհային միջին ԷՎԻ-ն 57.3 միավոր է (ԷՎԻ-ի պաշտոնական կայքի տվյալների բազայի համաձայն՝ այն 57.4 միավոր է): Այն նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոխվել՝ աճելով ընդամենը 0.03%-ով, ինչը վկայում է էներգիայի վերափոխման գլոբալ գործընթացի տեմպերի զգալի դանդաղման մասին:

120 երկրներից 67-ի կամ երկրների 56%-ի ԷՎԻ-ն 2026թ. աճել է, մինչդեռ մնացած 53 երկրներում արձանագրվել է նվազում: Ընդ որում, երկրների միայն 24%-ի դեպքում է առաջընթաց արձանագրվել էներգետիկ եռանկյան բոլոր երեք ուղղություններով (*անվտանգություն, արդարացիություն և կայունություն*):

Ջեկոյցի գլխավոր եզրահանգումն այն է, որ թեև էներգետիկ համակարգերի ընթացիկ արդյունավետությունը շարունակում է ավելանալ, այնուամենայնիվ, էներգիայի վերափոխման համար անհրաժեշտ պայմանները չեն բարելավվում: Մասնավորապես, վերջին տարվա ընթացքում «**Համակարգի**

<sup>3</sup> «Աքսենչրը» մասնագիտացած է խորհրդատվության, տեխնոլոգիական ծառայությունների և աուքսորսինգի ոլորտում: Գլխամասային գրասենյակը գտնվում է Դուբլինում (Իռլանդիա), այն գործում է ավելի քան 120 երկրներում: Ընկերությունը գործունեություն է իրականացնում մի քանի ոլորտներում՝ ներառյալ ֆինանսները, առողջապահությունը, արտադրությունը և հանրային ծառայությունները:

**արդյունավետություն»** ենթահինդեքսն աճել է 0.43%-ով, իսկ **«Վերափոխման պատրաստականություն»** ենթահինդեքսը, ընդհակառակը, վերջին տասնամյակում առաջին անգամ նվազել է 0.76%-ով:

Էներգետիկ եռանկյան երեք բաղադրիչներից ամենամեծ առաջընթացը գրանցվել է **«արդարացիություն»** ուղղությամբ, որի միջին ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է 1.6%-ով: **«Կայունություն»** ուղղության ցուցանիշը բարելավվել է 0.6%-ով, իսկ **«անվտանգություն»** ուղղությամբ անկում է արձանագրվել՝ 0.9%: Այսինքն, համաձայն Զեկույցի՝ էներգետիկ անվտանգությունը շարունակում է մնալ էներգիայի վերափոխման գործընթացի հիմնական սահմանափակող գործոնը:

**«Վերափոխման պատրաստականություն»** ենթահինդեքսի շրջանակներում ամենամեծ անկումը գրանցվել է **«Ֆինանսներ և ներդրումներ»** ենթախմբի գծով (-1.8%): **«Կարգավորումներ և քաղաքական հանձնառություն»** ենթախմբի գծով նվազումը 1.2% է, **«նորարարություն»** ենթախմբի գծով՝ 1.1%, իսկ **«ենթակառուցվածքների»** գծով անկումն աննշան է՝ 0.2%: Միայն **«կրթություն և մարդկային կապիտալ»** ենթախմբում է առկա աճ 2.0%-ով:

Զեկույցում նշվում է, որ համաշխարհային էներգետիկ ներդրումները 2025թ. գերազանցել են 3.3 տրիլիոն ԱՄՆ դոլարը, որից 2.3 տրիլիոնը բաժին է ընկել «մաքուր» էներգետիկային: Այնուամենայնիվ, այդ ներդրումների շուրջ 75%-ը կենտրոնացած է սահմանափակ թվով երկրներում (հիմնականում զարգացած), մինչդեռ զարգացող երկրները շարունակում են բախվել ֆինանսավորման և կապիտալի սահմանափակ հասանելիության խնդիրներին:

Զեկույցի համաձայն՝ վերականգնվող և միջուկային էներգիայի աղբյուրները 2025թ. ապահովել են համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության 42%-ը, իսկ վերականգնվող էներգիայի հզորություններն աճել են գրեթե 800 ԳՎտ-ով: Այնուամենայնիվ, էներգետիկ ոլորտից ածխաթթու գազի արտանետումները նույնիսկ փոքր-ինչ (0.4%-ով) աճել են՝ կազմելով 38.4 մլրդ տոննա, իսկ ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումները հասել են ռեկորդային՝ 60.6 մլրդ տոննա CO<sub>2</sub> համարժեքի:

2026-ի Զեկույցում հատուկ ուշադրություն է դարձվում աշխարհաքաղաքական ռիսկերի ազդեցությանը: Մասնավորապես, նշվում է, որ Հորմուզի նեղուցով էներգակիրների մատակարարումների խափանումները հանգեցրել են վերջին տարիների ամենախոշոր էներգետիկ ցնցումներից մեկին՝ ընդգծելով, որ էներգետիկ անվտանգությունն այլևս չի սահմանափակվում միայն վառելիքի մատակարարմամբ, այլ ներառում է նաև էլեկտրացանցերի հուսալիությունը,

կրիտիկական հանքանյութերի հասանելիությունը, մատակարարման շղթաների դիմակայունությունը և ենթակառուցվածքների պաշտպանվածությունը:

Ձեկույցում առանձնահատուկ շեշտադրվում է նաև արհեստական բանականության և թվայնացման աճող դերը: Արհեստական բանականության ոլորտում համաշխարհային ներդրումները 2025թ. հասել են 1.5 տրիլիոն ԱՄՆ դոլարի, իսկ տվյալների մշակման կենտրոնների էլեկտրաէներգիայի սպառումը կազմել է շուրջ 486 ՏՎտ-ժամ: Այս հանգամանքը զգալիորեն ավելացնում է էլեկտրաէներգիայի պահանջարկը և արագացնում էլեկտրացանցերի, էներգիայի կուտակման համակարգերի և ճկուն ենթակառուցվածքների զարգացման անհրաժեշտությունը:

Ըստ ԷՎԻ-ի կազմված համաշխարհային վարկանիշային աղյուսակի առաջին հորիզոնականում երրորդ տարին անընդմեջ Շվեդիան է 75.3 միավորով: Առաջին հնգյակում ընդգրկված են նաև Ֆինլանդիան (74.1 միավոր), Դանիան (72.6 միավոր), Էստոնիան (70.9 միավոր) և Նորվեգիան (70.5 միավոր):

Վարկանիշային աղյուսակի ստորին եռյակում են Ջամայկան (43.6 միավոր), Բոտսվանան (41.8 միավոր) և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը (39.8 միավոր):

Որպես եզրակացություն, Ձեկույցում նշված է, որ էներգիայի վերափոխման գործընթացի հետագա առաջընթացի համար անհրաժեշտ է.

- ամրապնդել էներգետիկ անվտանգությունը, մատչելիությունը և համակարգերի դիմակայունությունը,
- արագացնել ցանցային և պահեստավորման ենթակառուցվածքների զարգացումը,
- նվազեցնել թույլտվությունների տրամադրման և ցանցերին միացման խոչընդոտները,
- ապահովել կայուն կարգավորող միջավայր և կանխատեսելի քաղաքականություն,
- բարելավել ներդրումային գրավչությունը և ռիսկերի բաշխման մեխանիզմները:

## **2.2. Էներգիայի վերափոխման գործընթացն աշխարհի տարբեր տարածաշրջաններում**

2026-ի Ձեկույցում ևս (ինչպես նախորդ տարի) աշխարհը դիտարկված է որպես վեց տարածաշրջանների ամբողջություն՝ «Չարգացած երկրներ», «Եվրոպայի զարգացող երկրներ», «Ասիայի զարգացող երկրներ», «Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազանի երկրներ», «Մերձավոր Արևելք, Հյուսիսային Աֆրիկա և Պակիստան», «Ենթասահարական Աֆրիկա»:

ԷՎԻ-ի համաշխարհային վարկանիշային աղյուսակի լավագույն տասնյակում միայն եվրոպական երկրներ են, իսկ լավագույն քսանյակում 14-ը զարգացած երկրներ են:

Տարածաշրջանային վերլուծությունը ցույց է տալիս, որ նախորդ տարվա համեմատ ամենաբարձր առաջընթացը գրանցել է «Ենթասահարական Աֆրիկա» տարածաշրջանը, որի միջին ԷՎԻ-ն աճել է 1.2%-ով (աճ է արձանագրվել և՛ «Համակարգի արդյունավետություն», և՛ «Վերափոխման պատրաստականություն» ենթաինդեքսների գծով): ԷՎԻ-ի աճին հատկապես նպաստել են կրթության, նորարարության և ֆինանսական ներդրումների ոլորտներում արձանագրված բարելավումները:

«Եվրոպայի զարգացող երկրներ» տարածաշրջանում միջին ԷՎԻ-ն աճել է 0.7%-ով (0.45 միավորով): Առաջընթացը հիմնականում պայմանավորված է եղել էներգետիկ համակարգերի արդյունավետության բարելավմամբ, հատկապես արդարացիության և կայունության ուղղություններով: Միաժամանակ, վերափոխման պատրաստականությունը գործնականում մնացել է անփոփոխ, քանի որ կրթության և մարդկային կապիտալի ոլորտում արձանագրված դրական տեղաշարժերը չեզոքացվել են նորարարությունների ոլորտում գրանցված անկմամբ:

«Զարգացած երկրներ» տարածաշրջանի միջին ԷՎԻ-ն աճել է 0.2%-ով (0.11 միավորով), ինչը հիմնականում պայմանավորված է եղել արդարացիության, կայունության, կրթության և մարդկային կապիտալի, ինչպես նաև ենթակառուցվածքների ուղղություններով արձանագրված բարելավումներով, որոնք կարողացել են չեզոքացնել անվտանգության, ֆինանսների և ներդրումների, ինչպես նաև քաղաքական հանձնառության ոլորտներում գրանցված նահանջը: «Համակարգի արդյունավետություն» ենթաինդեքսն աճել է 0.7%-ով, սակայն նույնքան տոկոսով նվազել է «Վերափոխման պատրաստականությունը»:

«Ասիայի զարգացող երկրներ» տարածաշրջանում միջին ցուցանիշը գրեթե չի փոխվել՝ նվազելով 0.1%-ով (0.07 միավորով): Ենթակառուցվածքների և կրթության ու մարդկային կապիտալի ուղղություններով արձանագրված առաջընթացն ի վիճակի չի եղել ամբողջությամբ փոխհատուցել անվտանգության, նորարարությունների և ֆինանսների ու ներդրումների ոլորտներում արձանագրված վատթարացումը: Չինաստանը շարունակում է մնալ տարածաշրջանի առաջատարը՝ մաքուր էներգետիկայում 2025թ. կատարելով 627 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրումներ: Հնդկաստանը գրանցել է պատրաստականության ամենամեծ բարելավումներից մեկը՝ ենթակառուցվածքների և մարդկային կապիտալի զարգացման շնորհիվ և, համաձայն Զեկույցի, մոտ ապագայում,

Էներգետիկ վերափոխման հետագա փուլերում, դառնալու է հիմնական դերակատարներից մեկը:

«Լափինական Ամերիկա և Կարիբյան ավազանի երկրներ» տարածաշրջանում միջին ԷՎԻ-ն նվազել է 0.5%-ով (0.29 միավորով): Անկման հիմնական պատճառը վերափոխման պատրաստականության վատթարացումն է (ենթաինդեքսը նվազել է 2.52%-ով կամ 0.99 միավորով), հատկապես ենթակառուցվածքների, կարգավորման դաշտի և նորարարությունների ուղղություններով:

«Մերձավոր Արևելք, Հյուսիսային Աֆրիկա և Պակիստան» տարածաշրջանը գրանցել է ամենամեծ անկումը՝ 0.9% (0.47 միավոր): Ընդ որում, ԷՎԻ-ի երկու ենթաինդեքսներն էլ նվազել են՝ «Համակարգի արդյունավետությունը»՝ 0.4%-ով (0.27 միավորով), իսկ «Վերափոխման պատրաստականությունը»՝ 1.82%-ով (0.78 միավորով):

Այս տարվա Ձեկույցում նույնպես (ինչպես նախորդ տարի) ընդգծվում է, որ ներդրումային հոսքերի անհավասար բաշխումն էներգիայի վերափոխման գործընթացի հիմնական տարածաշրջանային մարտահրավերներից է: Թեև սպասվում է, որ էլեկտրաէներգիայի ապագա պահանջարկի աճի շուրջ 80%-ը բաժին է ընկնելու զարգացող երկրներին, մաքուր էներգետիկայում ներդրումների շուրջ 75%-ը շարունակում է կենտրոնացած մնալ սահմանափակ թվով տնտեսություններում:


Որպես կարևոր եզրահանգում, զեկույցում նշվում է, որ էներգիայի վերափոխման միասնական մոդել գոյություն չունի: Յուրաքանչյուր երկրի առաջընթացը պայմանավորված է նրա տնտեսական կառուցվածքով, էներգետիկ ռեսուրսներով, ինստիտուցիոնալ կարողություններով և զարգացման մակարդակով: Ուստի արդյունավետ քաղաքականությունը պարտադիր պետք է հաշվի առնի ազգային և տարածաշրջանային առանձնահատկությունները:

### 3. ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանը էներգիայի վերափոխման 55.2 միավոր ինդեքսով 2026թ. 120 երկրներ ներառող վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 65-րդ հորիզոնականը<sup>4</sup>:

Ինչպես նշված է Ձեկույցում, նախորդ տարիների բոլոր ցուցանիշները վերահաշվարկվել են, ուստի, միջժամանակային համեմատություններ կատարելիս, անհրաժեշտ է առաջնորդվել բացառապես ընթացիկ զեկույցում ներկայացված տվյալներով: Մասնավորապես, 2025-ի զեկույցում հրապարակված տվյալներով՝ Հայաստանը 54.3 միավոր ԷՎԻ-ով զբաղեցնում էր 65-րդ տեղը: Մինչդեռ, այս տարի վերանայված տվյալներով՝ մեր երկիրը 2025-ին 56.5 միավոր ԷՎԻ-ով զբաղեցրել է 58-րդ տեղը: **Հետևաբար, 2026-ին Հայաստանի ԷՎԻ-ն նախորդ տարվա համեմատ նվազել է 1.3 միավորով, իսկ վարկանիշային դիրքը վատթարացել է 7 հորիզոնականով:** ԷՎԻ-ի նվազումը հիմնականում պայմանավորված է «Վերափոխման պատրաստականություն» ենթահինդեքսի զգալի՝ 3.3 միավորով, անկմամբ՝ 2025-ի 46.9-ից մինչև 43.6 միավոր: Միաժամանակ, «Համակարգի արդյունավետություն» ենթահինդեքսը նույնպես նվազել է, սակայն աննշան՝ 63.0-ից հասնելով 62.9 միավորի:

Գծապատկեր 3. ԷՎԻ-ն և ենթահինդեքսները ՀՀ-ում, 2015-2026թթ.



<sup>4</sup> Աղբյուրը՝ <https://www.weforum.org/publications/energy-transition-index-2026/country-overview/> (այցելվել է 23.06.2026թ.):

Գծապատկեր 3-ից երևում է, որ անցած ժամանակահատվածում Հայաստանի ԷՎԻ-ն ունեցել է բավական անկայուն դինամիկա: 2015-2017թթ. այն գրեթե չի փոխվել, այնուհետև, 2018-ին արձանագրվել է թե՛ ԷՎԻ-ի և թե՛ վարկանիշային դիրքի բավական կտրուկ վատթարացում՝ երկու ցուցանիշների գծով էլ գրանցվել են վերջին 12 տարիներն ընդգրկող ժամանակահատվածի վատագույն արժեքները: 2018-ին հաջորդող երեք տարիներին դրանք շարունակաբար բարելավվել են, և 2021-ին գրանցվել են հիշյալ ժամանակահատվածի ամենամեծ ԷՎԻ-ն և լավագույն վարկանիշային դիրքը: **Սակայն 2022-2024թթ. դարձյալ շարունակական հետընթաց է արձանագրվել:** 2025-ին Հայաստանն ունեցել է զգալի առաջընթաց, որը, սակայն, չի բավականացրել նախորդող երեք տարիների նվազումը չեզոքացնելու համար: **2026-ին կրկին անկում է արձանագրվել, ինչը վկայում է այն մասին, որ Հայաստանի էներգիայի վերափոխման գործընթացը շարունակում է մնալ խոցելի արտաքին և ներքին մարտահրավերների նկատմամբ:**


Ինչպես երևում է Գծապատկեր 3-ից, Հայաստանի 2026թ. վարկանիշային դիրքը 2017-ի համեմատ փոխանակ բարելավվելու, վատթարացել է՝ այն էլ բավական շոշափելիորեն՝ 12 հորիզոնականով: ԷՎԻ-ի առումով նույնպես առկա է վատթարացում. 2026-ի ինդեքսը 0.3 միավորով պակաս է 2017-ի ցուցանիշից: Իսկ դա նշանակում է, որ անցած ինը տարիներին մեր երկրի վիճակն էներգիայի վերափոխման առումով վատթարացել է: Ի դեպ, նախկինում ավելի վատ դիրքերում գտնվող շատ երկրներ առաջ են անցել Հայաստանից: Նման միտումների պահպանման պարագայում Հայաստանը կհայտնվի էներգետիկ վերափոխման «լուսանցքում»:

Հայաստանի ԷՎԻ-ն ընդամենը 0.2 միավորով է գերազանցում Գաբոնի և Շրի Լանկայի ցուցանիշներին, իսկ 20 երկիր ընդգրկող իր տարածաշրջանային խմբում («Եվրոպայի զարգացող երկրներ»), միայն երեք երկրների (Չեռնոգորիայի, Սերբիայի, Բոսնիա և Հերցեգովինայի) ինդեքսն է Հայաստանի ցուցանիշից ցածր:

Հայաստանի ԷՎԻ-ն 2.2 միավորով ցածր է համաշխարհային միջին ցուցանիշից: Վերջինը 2017-2026թթ. ժամանակահատվածում աճել է 2.8 միավորով, մինչդեռ Հայաստանի ԷՎԻ-ն այդ նույն ժամանակահատվածում նվազել է 0.3 միավորով: Ի դեպ, եթե Հայաստանի ԷՎԻ-ն 2017-ին 0.9 միավորով գերազանցում էր համաշխարհային միջինին, ապա 2026-ին այն արդեն աշխարհի միջին ցուցանիշին զգալիորեն՝ 2.2 միավորով, զիջում է: Գծապատկեր 3-ից երևում է, որ 2015-2017թթ. Հայաստանի ԷՎԻ-ն բարձր է եղել դրա համաշխարհային միջին մակարդակից, իսկ 2018-ից ի վեր մեր երկրի ցուցանիշը միայն 2021-ին չի զիջել համաշխարհային միջինին:

Համաշխարհային միջինից ցածր են նաև ԷՎԻ-ի երկու ենթահինդեքսները (Գծապատկեր 4): Այսպես, Հայաստանի «Համակարգի արդյունավետություն» ենթահինդեքսը 62.9 միավոր է՝ համաշխարհային միջինից 0.8 միավորով պակաս: Տարբերությունը շատ ավելի շոշափելի է «Վերափոխման պատրաստականություն» ենթահինդեքսի դեպքում. այն կազմում է 43.6 միավոր՝ 4.4 միավորով ցածր, քան ենթահինդեքսի համաշխարհային միջինը: Այս հանգամանքը վկայում է, որ Հայաստանի հիմնական խնդիրը ոչ այնքան էներգետիկ համակարգի ընթացիկ վիճակն է, որքան դրա հետագա վերափոխման համար անհրաժեշտ որոշ պայմանների բացակայությունը:

Գծապատկեր 4. ՀՀ էներգիայի վերափոխման ինդեքսն ու ենթահինդեքսները և աշխարհի միջին գնահատականները, 2026 թվական



Աղյուսակ 1-ում ներկայացված է տեղեկատվություն վերջին երեք տարիներին Հայաստանում էներգիայի վերափոխման գործընթացի վերաբերյալ:

Աղյուսակ 1. ԷՎԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում, 2024-2026թթ.<sup>5</sup>

ՑՈՒՑԱՆԻՇ	ՏԱՐԻ	2024	2025	2026
ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ԻՆԴԵՔՍ	Միավոր	54.2	56.5	55.2
	Դիրք	71	58	65
«Համակարգի արդյունավետություն» ենթահինդեքս	Միավոր	63.1	63.0	62.9
Արդարացիություն	Միավոր	70.1	70.3	69.9
Անվտանգություն		61.8	61.7	61.2
Կայունություն		57.3	57.0	57.8
«Վերափոխման պատրաստականություն» ենթահինդեքս	Միավոր	40.8	46.9	43.6

<sup>5</sup> 2026թ. Զեկույցի շրջանակներում վերահաշվարկվել են նաև նախորդ տարիների ցուցանիշները: Աղբյուրը՝ <https://www.weforum.org/publications/energy-transition-index-2026/country-overview> (այցելվել է 23.06.2026թ.):

Կարգավորումներ և քաղաքական հանձնառություն	Միավոր	51.4	51.6	50.5
Ենթակառուցվածքներ		40.7	46.5	41.7
Կրթություն և մարդկային կապիտալ		42.2	42.8	43.5
Նորարարություններ		24.2	24.5	23.3
Ֆինանսներ և ներդրումներ		40.3	59.9	51.5

Աղյուսակից երևում է, որ նախորդ տարվա համեմատ Հայաստանի «Համակարգի արդյունավետություն» ենթաինդեքսը նվազել է 0.1, իսկ «Վերափոխման պատրաստականություն» ենթաինդեքսը՝ 3.3 միավորով:

**«Համակարգի արդյունավետություն»** ենթաինդեքսի բաղադրիչներից ամենամեծը 2026-ին ևս «Արդարացիությունն» է՝ 69.9 միավոր, թեև այն նախորդ տարվա համեմատ նվազել է 0.4 միավորով: Վատթարացման հիմնական պատճառը «Ցածր ածխածնային տեխնոլոգիաներում համեմատական առավելություն» ցուցանիշի 4.2 միավորով նվազումն է՝ 7.9-ից մինչև 3.7: Այս ցուցանիշը գնահատում է երկրի հարաբերական մասնագիտացումը և մրցակցային դիրքերը ցածր ածխածնային տեխնոլոգիաների արտադրության ու արտահանման ոլորտում: Ցուցանիշի նման նվազումը վկայում է, որ Հայաստանի՝ առանց այն էլ խիստ սահմանափակ հնարավորությունները տեխնոլոգիական արտադրանքի միջազգային շուկաներում մասնակցության առումով էլ ավելի են փոքրացել:

Նախորդ տարվա համեմատ նվազում է արձանագրվել նաև «Անվտանգություն» բաղադրիչի գծով՝ 0.5 միավորով: Իսկ «Կայունություն» բաղադրիչը բարելավվել է՝ 0.8 միավորով՝ հասնելով 57.8-ի:

**«Վերափոխման պատրաստականություն»** ենթաինդեքսի գծով առավել նշանակալի վատթարացում արձանագրվել է «Ֆինանսներ և ներդրումներ» ուղղությամբ. ցուցանիշը 2025-ի 59.9 միավորից նվազել է մինչև 51.5: Պատճառը «Մաքուր էներգետիկայում ներդրումներ (<ՆԱ-ի %)>» ցուցչի 24.0 միավորով նվազումն է՝ 65.1-ից մինչև 41.1: Այս ցուցիչը բնութագրում է վերականգնվող էներգետիկայի, միջուկային էներգետիկայի, ջրածնային տեխնոլոգիաների, էլեկտրական տրանսպորտի և էներգետիկ անցման հետ կապված այլ ոլորտներում իրականացվող ներդրումների ծավալը: **Մտահոգիչ է, որ էներգետիկ համակարգի վերափոխման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներգրավման առումով Հայաստանը ոչ միայն առաջընթաց չի ունեցել, այլև այս ասպարեզում գրանցվել է զգալի հետընթաց:**

Զգալի անկում է արձանագրվել նաև «Ենթակառուցվածքներ» ուղղությամբ՝ 46.5-ից մինչև 41.7 միավոր: Վատթարացման պատճառներից մեկը «Վերականգնվող էներգիայի հզորությունների աճ» ցուցչի 13.5 միավորով նվազումն է՝ 55.3-ից մինչև 41.8: Այս ցուցիչը գնահատում է, թե որքան արագ են

ավելանում վերականգնվող էներգիայի արտադրական հզորությունները, և որքան մեծ է դրանց դերն ընդհանուր էներգետիկ համակարգում:

**Վերոհիշյալ երկու ցուցիչների այսպիսի էական նվազումն անհասկանալի է դարձնում այն հանգամանքը, որ գործող իշխանությունը մշտապես որպես Հայաստանի էներգետիկ քաղաքականության կարևորագույն հաջողություն է ներկայացնում վերջին տարիներին արևային էներգետիկայի զարգացումը:**

«Կրթություն և մարդկային կապիտալ» բաղադրիչը բարելավվել է՝ 42.8-ից հասնելով 43.5 միավորի, իսկ «Նորարարություններ» ուղղությամբ արձանագրվել է նվազում՝ 24.5-ից մինչև 23.3 միավոր՝ հիմնականում պայմանավորված «Նորարարական բիզնես միջավայր» ցուցանիշի 2.5 միավորով նվազումով (48.3-ից մինչև 45.8): Այս ցուցանիշով գնահատվում է, թե տնտեսավարող սուբյեկտները որքանով են պատրաստ ընդունելու նորարարական և ռիսկային գաղափարներ, մասնակցելու հետազոտությունների և մշակումների ոլորտում համագործակցությանը, ինչպես նաև ստեղծելու այնպիսի միջավայր, որտեղ նորաստեղծ ընկերությունները կարող են հաջողությամբ զարգանալ և մրցակցել շուկայում: Ցուցանիշի անկումը վկայում է, որ Հայաստանում նորարարությունների զարգացման համար անհրաժեշտ գործարար միջավայրը շարունակում է բախվել լուրջ սահմանափակումների: **Հատկանշական է, որ նորարարությունների ոլորտը շարունակում է մնալ Հայաստանի ամենաթույլ կողմերից մեկը: Հատկապես մտահոգիչ է հետազոտությունների և մշակումների վրա կատարվող ծախսերի ցածր մակարդակը և շրջակա միջավայրի հետ կապված տեխնոլոգիաների տարածման սահմանափակ տեմպերը:**

«Նորարարություններ» ուղղության վատթարացմանը նպաստել է նաև «Հետազոտությունների և մշակումների ծախսեր (ՀՆԱ-ի %» ցուցանիշի 1.1 միավորով նվազումը՝ 8.4-ից մինչև 7.3: Այս ցուցանիշը բնութագրում է գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա պետության, բիզնեսի, բուհերի և այլ կազմակերպությունների կողմից կատարվող ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին: **Ցուցանիշի անկումը ցույց է տալիս, որ գիտելիքահենք տնտեսության ձևավորման համար անհրաժեշտ գիտահետազոտական ներուժի ֆինանսավորումը, որն առանց այն էլ խիստ անբավարար մակարդակի վրա էր, էլ ավելի է վատթարացել:**

Ընդհանրապես, «Նորարարություններ» ուղղությունում արձանագրված անկումը ոչ մի կերպ «չի տեղավորվում» տեխնոլոգիական տնտեսության ձևավորման և նորարարությունների խթանման վերաբերյալ գործող իշխանության տարբեր ներկայացուցիչների կողմից պարբերաբար հնչեցվող հայտարարությունների տրամաբանությունում:

Զեկույցի տվյալները ցույց են տալիս նաև, որ Հայաստանի համեմատաբար ուժեղ կողմերից են էներգիայի համընդհանուր հասանելիությունը, մաքուր վառելիքի օգտագործման բարձր մակարդակը, բնական գազի գինը և այլն: ՌԴ-ի հետ հարաբերությունների ծայրաստիճան վատթարացման պատճառով այդ ուժեղ կողմերից մեկը՝ բնական գազի գինը, կարող է վերանալ (չի բացառվում նույնիսկ, որ այն վերածվի առավել խոցելի կողմերից մեկի): Հայաստանի առավել խոցելի ուղղություններն են նորարարական ներուժը, ներմուծման դիվերսիֆիկացումը, տաղանդների ներգրավման ու պահպանման կարողությունը և այլն:

Ընդհանուր առմամբ, 2026-ի արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի համար առաջնահերթ խնդիր է ոչ այնքան էներգետիկ համակարգի ընթացիկ արդյունավետության պահպանումը, որքան էներգիայի վերափոխման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ, ֆինանսական և տեխնոլոգիական հիմքերի ամրապնդումը: Առանց ներդրումային միջավայրի բարելավման, ենթակառուցվածքների արդիականացման, նորարարությունների խթանման և մարդկային կապիտալի զարգացման անհնար է ապահովել էներգիայի վերափոխման առումով կայուն առաջընթաց:

#### 4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

2026թ. Զեկույցում ևս Հայաստանը ներառված է «Եվրոպայի զարգացող երկրներ» խմբում: Ինչպես արդեն նշվել է, խմբում ընդգրկված է 20 երկիր, որոնցից Հայաստանը ԷՎԻ-ով գերազանցում է միայն երեքին (Չեռնոգորիային, Սերբիային, Բոսնիա և Հերցեգովինային):

Առավել հետաքրքրական է նախկին սոցիալիստական երկրների (այդ թվում՝ ԽՍՀՄ նախկին հանրապետությունների) հետ համեմատական վերլուծությունը: Այդ նպատակով սույն տեղեկանքի շրջանակներում ձևավորվել է առանձին խումբ, որում ներառվել են Զեկույցի՝ «Եվրոպայի զարգացող երկրներ» խմբում ընդգրկված Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրները, ինչպես նաև այդ և «Ասիայի զարգացող երկրներ» խմբերում ներառված հետխորհրդային հանրապետությունները:

**Աղյուսակ 2. ԷՎԻ-ն Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրներում և ԽՍՀՄ նախկին հանրապետություններում, 2025-2026թթ.**

Երկիր	Դիրք				ԷՎԻ	
	Տարածաշրջանային		Համաշխարհային			
	2025	2026	2025	2026	2025	2026
1. Էստոնիա	1	1	8	4	69.1	70.9
2. Լատվիա	2	2	10	7	68.1	70.0
3. Ռումինիա	6	3	28	18	64.1	66.1
4. Լիտվա	3	4	16	23	67.5	65.5
5. Հունգարիա	7	5	29	25	64.0	65.1
6. Սլովենիա	5	6	24	28	65.0	64.1
7. Խորվաթիա	4	7	23	29	65.3	64.1
8. Բուլղարիա	8	8	34	30	62.9	64.0
9. Սլովակիա	9	9	37	35	62.0	63.4
10. Չեխիա	10	10	38	37	61.4	62.1
11. Լեհաստան	14	11	50	39	58.2	61.3
12. Ալբանիա	11	12	39	41	61.0	60.9
13. Վրաստան	13	13	45	46	59.7	59.9
14. Ադրբեջան	12	14	41	53	60.5	58.3
15. Ուկրաինա	16	15	61	57	56.1	56.6
16. Հյուսիսային Մակեդոնիա	18	16	69	60	54.5	56.5
17. Մոլդովա	17	17	65	64	55.5	55.3
18. Հայաստան	15	18	58	65	56.5	55.2
19. Չեռնոգորիա	21	19	80	71	52.8	54.7
20. Ղազախստան	24	20	95	75	50.4	53.6
21. Սերբիա	20	21	79	79	53.3	52.8
22. Տաջիկստան	23	22	85	89	52.5	52.0
23. Բոսնիա և Հերցեգովինա	19	23	77	91	53.6	51.2
24. Ղրղզստան	22	24	81	98	52.8	50.4

Աղյուսակ 2-ից երևում է, որ 2026-ին Հայաստանը դիտարկվող 24 երկրների ցանկում զբաղեցնում է 18-րդ տեղը: **Նախորդ տարվա համեմատ Հայաստանի դիրքը վատթարացել է երեք հորիզոնականով.** Հայաստանի ԷՎԻ-ն գերազանցում է խմբի վեց երկրների (Չեռնոգորիայի, Ղազախստանի, Սերբիայի, Տաջիկստանի, Բոսնիա և Հերցեգովինայի, Ղրղզստանի) ինդեքսները (2025-ի տվյալներով՝ Հայաստանը խմբի ինը երկրներից էր առաջ):

Էստոնիան հինգերորդ տարին անընդմեջ այս խմբի առաջատարն է՝ 70.9 միավոր ԷՎԻ-ով (այն համաշխարհային վարկանիշային աղյուսակում չորրորդն է): Երկրորդ տեղում Լատվիան է՝ 70.0 միավորով, իսկ երրորդ հորիզոնականը զբաղեցնում է Ռումինիան՝ 66.1 միավորով, որը նախորդ տարվա համեմատ երեք հորիզոնականով բարելավել է իր դիրքերը՝ առաջ անցնելով չորրորդ

հորիզոնական տեղափոխված Լիտվայից (65.5 միավոր): Հինգերորդը Հունգարիան է՝ 65.1 միավորով:

Խմբի հետնապահը Ղրղզստանն է՝ 50.4 միավոր ԷՎԻ-ով: Վերջին հնգյակում ընդգրկված են նաև Ղազախստանը (53.6 միավոր), Սերբիան (52.8 միավոր), Տաջիկստանը (52.0 միավոր), Բոսնիա և Հերցեգովինան (51.2 միավոր):

Դիտարկվող երկրների շարքում ամենամեծ առաջընթացն արձանագրել են Ղազախստանը և Լեհաստանը, որոնց ԷՎԻ-ն աճել է համապատասխանաբար 3.2 և 3.1 միավորով: Էական՝ 2-ական միավորի, բարելավում են գրանցել նաև Հյուսիսային Մակեդոնիան և Ռումինիան: Միաժամանակ, առավել զգալի անկում է արձանագրվել Բոսնիա և Հերցեգովինայում (-2.4 միավոր), Ղրղզստանում (-2.4 միավոր) և Ադրբեջանում (-2.2 միավոր):

Զեկույցում ներառված ԵԱՏՄ անդամ երեք երկրների թվում<sup>6</sup> Հայաստանը շարունակում է պահպանել առաջատար դիրքը՝ գերազանցելով Ղազախստանին (1.6 միավորով) և Ղրղզստանին (4.8 միավորով):

Հարևան երկրների հետ Հայաստանի համեմատականը ներկայացված է Աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3. Հայաստանի և հարևան երկրների ԷՎԻ-ն, ենթահինդքսները և վարկանիշային դիրքը, 2025-2026թթ.**

Ցուցանիշ/երկիր	Վրաստան		Ադրբեջան		Հայաստան		Թուրքիա		Իրան	
	2025	2026	2025	2026	2025	2026	2025	2026	2025	2026
<b>ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԻՆԴԵՔՍ</b>	59.7	<b>59.9</b>	60.5	<b>58.3</b>	56.5	<b>55.2</b>	58.1	<b>60.1</b>	48.4	<b>48.8</b>
<b>«Համակարգի արդյունավետություն» ենթահինդքս</b>	65.1	<b>66.2</b>	70.6	<b>70.3</b>	63.0	<b>62.9</b>	63.1	<b>66.2</b>	59.6	<b>59.4</b>
<b>«Վերափոխման պատրաստականություն» ենթահինդքս</b>	61.5	<b>50.4</b>	45.5	<b>40.2</b>	46.9	<b>43.6</b>	50.5	<b>50.8</b>	31.7	<b>32.7</b>
<b>ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԴԻՐՔ</b>	45	<b>46</b>	41	<b>53</b>	58	<b>65</b>	51	<b>44</b>	104	<b>105</b>

Ինչպես երևում է Աղյուսակից, Հայաստանը հարևան երկրներից ԷՎԻ-ով գերազանցում է միայն Իրանին (ինչպես և նախորդ տարի). Հայաստանի ԷՎԻ-ն 6.4 միավորով գերազանցում է Իրանի ցուցանիշը, սակայն զիջում է Վրաստանին (4.7 միավորով), Ադրբեջանին (3.1 միավորով) և Թուրքիային (4.9 միավորով):

<sup>6</sup> ԵԱՏՄ երկրներից ՌԴ-ն և Բելառուսը ներառված չեն 2026 թվականի զեկույցում:

Հատկանշական է, որ տարածաշրջանի երկրներից միայն Ադրբեջանն ու Հայաստանն են 2026-ին արձանագրել ԷՎԻ-ի նվազում: Ադրբեջանի ԷՎԻ-ն նվազել է 2.2, իսկ Հայաստանինը՝ 1.3 միավորով: Մյուս հարևան երկրների ԷՎԻ-ն աճել է՝ Թուրքիայինը՝ 2.0, Իրանինը՝ 0.4, իսկ Վրաստանինը՝ 0.2 միավորով:

Համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը Թուրքիային զիջում է 21, Վրաստանին՝ 19, Ադրբեջանին՝ 12 հորիզոնականով և գերազանցում է Իրանին՝ 40 հորիզոնականով:

«Համակարգի արդյունավետություն» ենթաինդեքսով Հայաստանը գերազանցում է միայն Իրանին: Ընդ որում, Ադրբեջանը շարունակում է տարածաշրջանում պահպանել առաջատար դիրքը հենց այս ենթաինդեքսով:

«Վերափոխման պատրաստականություն» ենթաինդեքսի գծով համեմատության առումով Հայաստանի դիրքերն ավելի նպաստավոր են: Հայաստանը 43.6 միավոր ցուցանիշով գերազանցում է Իրանին (10.9 միավորով) և Ադրբեջանին (3.4 միավորով), սակայն զիջում է Թուրքիային (7.2 միավորով) և Վրաստանին (6.8 միավորով):

Ընդհանուր առմամբ, տարածաշրջանային համեմատությունը ցույց է տալիս, որ Հայաստանի հիմնական մարտահրավերը շարունակում է մնալ ոչ այնքան էներգետիկ համակարգի ընթացիկ արդյունավետության բարձրացումը, որքան վերափոխման պատրաստականության այնպիսի մակարդակի ապահովումը, որը հնարավորություն կտա արագացնել վերականգնվող էներգետիկայի զարգացումը, ընդլայնել ներդրումային հնարավորությունները, արդիականացնել ենթակառուցվածքները և խթանել նորարարական ներուժը: Միայն այդ դեպքում Հայաստանը կկարողանա ոչ միայն բարելավել իր դիրքերը տարածաշրջանային և համաշխարհային վարկանիշային աղյուսակներում, այլև ապահովել էներգետիկ համակարգի երկարաժամկետ մրցունակությունն ու դիմակայունությունը:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով նշենք.

- Հայաստանն էներգիայի վերափոխման ինդեքսով (ԷՎԻ-ով) 2026 թվականին 120 երկրների թվում 65-րդն է: Հայաստանի ԷՎԻ-ն 55.2 միավոր է՝ նախորդ տարվա ցուցանիշից 1.3 միավորով պակաս: Նվազումը հիմնականում պայմանավորված է «Վերափոխման պատրաստականություն» ենթաինդեքսի զգալի՝ 3.3 միավորով, անկմամբ: ԷՎԻ-ի մյուս՝ «Համակարգի արդյունավետություն», ենթաինդեքսը նույնպես նվազել է, սակայն աննշան:

«Վերափոխման պատրաստականություն» ենթաինդեքսի գծով նախորդ տարվա համեմատ առավել նշանակալի վատթարացում արձանագրվել է «Ֆինանսներ և ներդրումներ» ուղղությամբ. ցուցանիշը 2025-ի 59.9 միավորից նվազել է մինչև 51.5: Պատճառը «Մաքուր էներգետիկայում ներդրումներ (<ՆԱ-ի %)> ցուցչի (այս ցուցիչով գնահատվում է վերականգնվող էներգետիկայի, միջուկային էներգետիկայի, ջրածնային տեխնոլոգիաների, էլեկտրական տրանսպորտի և էներգետիկ անցման հետ կապված այլ ոլորտներում իրականացվող ներդրումների ծավալը)՝ 100-միավորանոց համակարգում միանգամից 24 միավորով նվազումն է:

Նախորդ տարվա համեմատ զգալի անկում է արձանագրվել նաև «Ենթակառուցվածքներ» ուղղությամբ՝ 46.5-ից մինչև 41.7 միավոր: Պատճառներից մեկը «Վերականգնվող էներգիայի հզորությունների աճ» ցուցչի՝ 100-միավորանոց համակարգում 13.5 միավորով նվազումն է: Այս ցուցիչով գնահատվում է, թե որքանով են մեծ վերականգնվող էներգիայի արտադրական հզորությունների աճի արագությունը և ընդհանուր էներգետիկ համակարգում դրանց դերը:

«Նորարարություններ» ուղղությամբ 2025-ի համեմատ արձանագրվել է նվազում՝ 24.5-ից մինչև 23.3 միավոր: Զեկույցի տվյալները ցույց են տալիս, որ նորարարությունների ոլորտը շարունակում է մնալ Հայաստանի ամենաթույլ կողմերից մեկը:

Նշված ցուցիչներով արձանագրված անկման ֆոնին առնվազն անհասկանալի են տեխնոլոգիական տնտեսության ձևավորման և նորարարությունների խթանման վերաբերյալ գործող իշխանության տարբեր ներկայացուցիչների կողմից պարբերաբար հնչեցվող բարձրագույն հայտարարությունները, որոնցով վերջին տարիներին արևային էներգետիկայի զարգացումը մատնանշվում է որպես Հայաստանի էներգետիկ քաղաքականության կարևորագույն հաջողություն:

Համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը նախորդ տարվա համեմատ նահանջել է 7 հորիզոնականով: Պետք է նշել, որ Հայաստանի վարկանիշային դիրքը 2017-ի համեմատ ոչ միայն չի բարելավվել, այլև զգալիորեն՝ 12 հորիզոնականով, վատթարացել է: Իսկ դա նշանակում է, որ Հայաստանն անցած տարիներին էներգիայի վերափոխման գործընթացի առումով ավելի ոչ մրցունակ է դարձել: Ի դեպ, նախկինում ավելի վատ դիրքերում գտնվող շատ երկրներ առաջ են անցել Հայաստանից:

Հայաստանի ԷՎԻ-ի դինամիկան բավական անկայուն է: Այսպես, 2018-ին արձանագրվել է թե՛ ԷՎԻ-ի և թե՛ վարկանիշային դիրքի կտրուկ վատթարացում՝ երկու ցուցանիշների գծով էլ գրանցվել են վերջին 12 տարիների վատագույն արդյունքները: 2019-2021 թվականներին դրանք շարունակաբար բարելավվել են, սակայն հաջորդող երեք տարիներին դարձյալ հետընթաց է արձանագրվել: 2025-ին Հայաստանն ունեցել է զգալի առաջընթաց, որը, սակայն, բավարար չի եղել նախորդող երեք տարիների նվազումը չեզոքացնելու համար: 2026-ին կրկին անկում է արձանագրվել: Այս դինամիկան վկայում է այն մասին, որ Հայաստանի էներգիայի վերափոխման գործընթացը շարունակում է մնալ խոցելի արտաքին և ներքին մարտահրավերների նկատմամբ:

Հայաստանի 2026-ի ԷՎԻ-ն 2.2 միավորով ցածր է համաշխարհային միջին ցուցանիշից, որը 2017-2026թթ. ժամանակահատվածում աճել է 2.8 միավորով: Մինչդեռ Հայաստանի ԷՎԻ-ն նույն ժամանակահատվածում նվազել է 0.3 միավորով: Ընդ որում, եթե 2017-ին Հայաստանի ԷՎԻ-ն գերազանցում էր համաշխարհային միջինին 0.9 միավորով, ապա 2026-ին այն արդեն աշխարհի միջին ցուցանիշին զգալիորեն զիջում է 2.2 միավորով: Հայաստանի ԷՎԻ-ն 2015-2017թթ. բարձր է եղել դրա համաշխարհային միջին մակարդակից, իսկ 2018-ից ի վեր մեր երկրի ցուցանիշը համաշխարհային միջինին չի զիջել միայն 2021-ին:

Ի դեպ, Հայաստանի ԷՎԻ-ի երկու ենթահինդեքսներն էլ համաշխարհային միջինից ցածր են, սակայն շեղումը շատ ավելի շոշափելի է «Վերափոխման պատրաստականություն» ենթահինդեքսի դեպքում. այն կազմում է 43.6 միավոր՝ 4.4 միավորով ցածր ենթահինդեքսի համաշխարհային միջինից: Այս հանգամանքը վկայում է, որ Հայաստանի հիմնական խնդիրը ոչ այնքան էներգետիկ համակարգի ընթացիկ վիճակն է, որքան դրա հետագա վերափոխման համար անհրաժեշտ որոշ պայմանների բացակայությունը, ինստիտուցիոնալ, ֆինանսական և տեխնոլոգիական հիմքերի ամրապնդումը:

**ԷՎԻ-ի հաշվարկման համար օգտագործվող ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի՝ համեմատաբար ուժեղ կողմերից մեկը բնական գազի գինն է, որը, սակայն, ՌԴ-ի հետ հարաբերությունների ծայրաստիճան վարթարացման պատճառով կարող է չեզոքանալ և նույնիսկ վերածվել առավել խոցելի կողմերից մեկի:**

**Միանշանակ է, որ առանց ներդրումային միջավայրի բարելավման, ենթակառուցվածքների արդիականացման, նորարարությունների խթանման և մարդկային կապիտալի զարգացման անհնար է էներգիայի վերափոխման առումով ապահովել կայուն առաջընթաց:**

- 2026 թվականին ևս համաշխարհային վարկանիշային աղյուսակի առաջատարը Շվեդիան է՝ 75.3 միավոր ինդեքսով: Հետնապահը Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունն է՝ 39.8 միավորով:
- Հայաստանը ներառված է «Եվրոպայի զարգացող երկրներ» տարածաշրջանային խմբում, որի 20 երկրներից միայն երեքի (Չեռնոգորիայի, Սերբիայի, Բոսնիա և Հերցեգովինայի) ինդեքսն է Հայաստանի ցուցանիշից ցածր:
- Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրները և հետխորհրդային հանրապետությունները (ընդամենը՝ 24 երկիր) ներառող խմբում Հայաստանը 18-րդն է՝ նախորդ տարվա համեմատ նահանջելով երեք հորիզոնականով:
- Հայաստանը ԷՎԻ-ով և համաշխարհային վարկանիշային աղյուսակում զբաղեցրած դիրքով հարևան չորս երկրներից գերազանցում է միայն Իրանին՝ 40 հորիզոնականով: Թուրքիային, Վրաստանին և Ադրբեջանին Հայաստանը զիջում է համապատասխանաբար 21, 19 և 12 հորիզոնականով:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:**

**Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**